

Ու ձայներէն ալ՝ որ քիչ քիչ
Իմ երազներըս կ'օրօրեն:

Եւ անծանօթ աշխարհներուն՝
Անեզրին մէջ խորհրդագեղ՝
Կ'անդրադառնայ մէջն իմ հոգուն
Կրկներեւոյթը գունագեղ:

Պիտի ըզգա՛մ ես տեւաբար
Բուրումն անոնց ծաղիկներուն,
Որոնք հեշտին կը դառնան պար^a
Լուսացնցող ցօղով լեցուն:

Պիտի ծըծե՛մ ես անդադար
Յոժ երազանքն անոնց բային,
Ու շողերն՝ որ կը փալփըլին՝
Ոսկեպաղպաջ՝ ինչպէս նեկտար:

Պիտի անցնի՛մ ես խանդավառ
Այդ լուսոռոգ ուղիներէն.
Ես՝ ուխտաւոր ուղեմուլար՝
Խորհրդածուփ թափառելէն:

Պիտի անցնի՛մ ես Ասիունին
Յաւերժալուռ երկինքներէն,
Մինչեւ յոյզերս ամէն թօշնին՝
Ու ես երկիր դառնամ նորէն:

36. ԻՐԻԿՈՒԿԱՆ ՁԱՅՆԵՐ

Կ'ալեկոծին տարփոտ ձայներն իրիկուան,
Յորձանքին մէջ յոգնակոհակ հովերուն.
Անրջածուփ, նըւաղ բոյրերն երերուն
Վերջալոյսին մէջ ոսկեզօծ՝ կը հեւան:

Խըրախութեան աղաղակներ հեշտալուր
Կը պլլըլին այդ ցնծածայն նըւագին.
Ու կ'անհետին՝ մէջն այդ ծըփուն յորձանքին՝
Յեշտերգութեանց թոյլ ծըլէններ կցկըտուր: